



76. ԴՈՒՆՅԱՒ ԳՈՋԱԼԻ ՆԱՂԸԸ

Մեզանա մին քանի հարիր տարի առաջ, թիւ չտեղ, որ ախշարքըմը, գիղըմ չեմ, ինըմ են, ինըմ չեն, մին թաքավոր հու մին թաքուհի են ինըմ, համա Աստու պատիժը ընգած ա ինըմ թաքուհու կլխին, ըստան խոխա չի ինըմ: Թաքավորը իջքան լողման հեքիմնի յա կանչըմ, կարըմ չեն ճար անեն, շատ վանքերի հու եղցիների տոռն ա մաչըմ, էլ ուխտատեղ չի թողըմ ոտապեպիկ ուխտ ա քինըմ, աչ ու ծախ ողորմութուն ա պըժանըմ, թիւ ինչ ա Աստոծ մեխկը կա, մին ժանանգ տա, թիւհըր չի ինըմ:

Օրերից մին օր էլ թաքուհին բոլորան կլխի յա ընգըմ, որ ինքը պատճառավոր ա: Թաքավորը հենց իմանըմ ա էս պանը ուրխանըմ ա, ախշարքովը մին ա տանըմ, սկսըմ ա էվելի շատ ողորմութուն պժանիլ:

Վախտը որ թըմամըմ ա, թաքուհին մին տղա յա պերըմ: Տղա մի ասիլ, մին Աստու կրակ ասա, կլխը մարթի յա ինըմ, ջանը՝ օցի: Որ կոռըմ ա, որ լաց ա ինըմ, սաղ պալատը դղըրդըմ ա:

Թաքուհին ծիծ ա տալիս, կշտանըմ չի, կաթ են պերըմ տալիս, էլհա սասը կտրըմ չի: Ճարները կտրած՝ մին տան հաց են պերըմ տինըմ առաչին, մեծ մարթի մնան սաղ ուտըմ ա, պըժընըմ: Ըստեղ կլխի են ընգըմ, որ էտ ուշափ ա: էս ուշափա իջքան մեծանըմ ա, ըշտահն էնքան պանցվըմ ա, ընդհենց ա պանցվըմ, որ թաքավորի չիմ պովուրնին իջքան ճաչ են էփըմ, էլհա կարըմ չեն հրացեն:

Թաքավորն ու թաքուհին ուրանց օրն անիծիլով նստըմ են, խելք խելքի են տալիս, թիւ ուշափին ինչ անեն: Մին ուզըմ են ըսպանեն, մին էլ մտածըմ են, ախր ուրանցից ա պըտկվել: Վերջը պայման են կապըմ, Ուշափին քցեն մին խոր հորի մեջ: Հենց քցըմ են, թիւ չէ, քաղաքի ճոլը կտրվըմ ա: Տու մի ասիլ, ճոլըմ էտ հորովն ա ասկենալիս ինըմ:

Եփ Ուշափին խնթըմ են՝ ճոլըմ պանց թողա, ասըմ ա.—Թիւ ամման օր մին ազափ ախճիկ կըքցեք հորը, ճոլը կըտամ, թիւ չէ՝ չէ:

Ճարները կտրած՝ ըտենց էլ անըմ են: Ամման օր մին ազափ

ախճիկ են ղըրկըմ Ուշափին, որ էտ օրը ճողը տա: Մին վախտ էլ տենըմ են, որ քաղաքըմը էլ ախճիկ չի մնացել: Տես են ընգնըմ, տեն են ընգնըմ, վերչը մին տուն են քթնըմ, էս տանն էլ էրկու ախճիկ:

Տո՛ւ մի ասիլ, էս տանտրո՛ւչ կնիկը մեռած ա ինըմ, ետնակին պերած ա ինըմ: Մին ախճիկը, որի անըմը Դո՛ւնյա Գո՛ղալ ա ինըմ, ուրա՛ հալալն ա ինըմ, մեկէլը՝ Չա՛չոն մոր նհետ եկած խորթ ախճիկը:

Նորաթը հըսած ա ինըմ էս էրկու քվորցը:

Մարթ ու կնիկ սկսըմ են տալը-առնիլը, թա՛ սիֆտիցը որին են տալու:

Ամման մինը ուրն ղոյն ա քաշըմ: Կնիկն ասըմ ա՝ քու ախճկանը ղըրկի՛, մարթը թա՛ քու: Վերչը կնիկարմատը ուրն ասածն ա անըմ, մարթին կոտըմ ա, էն էլ, ճարը կտրած, ուրն հըրազաղ ախճկանիցը պըժանվըմ ա:

—Դո՛ւնյա Գո՛ղալըս, հալըթ մեր ճակատին էլ էս սև կիրն էր կիրած: Յա սօր մեռած, յա էքուց, չիմ մին հեսաբ ա, հալըթ ճակատակիրից փախնիլ չըկա, եփ էլ ինի, չիմմա մեռնիլու վենք, —ասըմ ա ախճըկանը խտըտըմ, հոնքուր-հոնքուր լաց ինըմ:

—Ա՛ հեր, լաց ինիլով ցավին ճար չի ինիլ, թա՛ բախտ իլավ, Ասսու զորութունովը մին տո՛ւո կըպացվի, կըպըծենմ, թա՛ չէ՝ Ուշափին փայ կինեմ: Ղըսմաթս ինչ որ ինի, էն ա ինիլու, —ասըմ ա ախճիկն ու վեր կենըմ քինըմ մոր կըեզմանին: Փթաթվըմ ա կըեզմանաքարին, աղոթկ ա անըմ:

Ասսու հրամանքովը ախճկա վրա մուռջ ա կալիս: Կըեզմանաքարը խտտած քընըմ ա հու արագին մերը կալիս ա տեսութունի:

—Սիրտըտ լեն պահի, Դո՛ւնյա Գո՛ղալս, եփ զարթնես, կըլխիտ տակին մին թըբըղի ճըպատ ա ինիլու, վեր կունես հետըտ, կըքինան հորըտ կասես քառսուն լավաչ հաց տա հու մին կո՛մչի կաչի: Քե հորը քցիլից առաչ կաչվըմը կըփթաթվես, լավաչը կըտնես ծոցըմըտ, թըբըղի ճպատն էլ կառնես ծեռըտ: Եփ որ Ուշափը վրա պըրծնի, ճըպատով մին լավ կըղանղես խզանկոթը, եղո ծոցիցըտ մին լավաչ կըքցես առաչը: Սըհենց քառսուն օր էն քե ծեռ չի տալ, վերչը համ Ուշափիցը կըպըծնես, համ էլ ղըսմաթըտ կըճարես, —ասըմ ա հու չքվըմ:

Դո՛ւնյա Գո՛ղալը եփ զարթնըմ ա, ղորթ որ կըլխատակին տենըմ ա մին թըբըղի ճըպատ: Վեր ա ունըմ կալիս տուն, հորն էլ խընթըմ ա, որ քառսուն լավաչ ու մին կո՛մչի կաչի ճարի:

Հերը սաղ քըչեր արտասունքն աչկին սարքըմ ա ախճկա պանթին-քը, ռավոտը եփ ծեքծեքին ա անըմ, ախճկա մեչկին մին քանդիր ա կապըմ ու տանըմ հորի կուշտը: Եփ Դո՛ւնյա Գո՛ղալին քցըմ են հո-

րը, Ուշափը վրն յա պըրծնըմ, թն կուլ տա, համա ախճիկը թըրլղու ճպատով որ դանըմ ա խզանկոթը, Ուշափը կծիկ ա տառնըմ, կուչ կանխս:

Մին էլ որ առաջին ընգած լավաշը տենըմ չի, հողախառը, քա-
րախառը կուլ ա տալիս: Կուլ տալը բնչտան պերանիցը մին օց ա
վեր ընգնըմ հու սատկըմ: Սըհենց ամման օր մին ճըպատ հու մին
լավաշ տալով՝ Դոնյան Գոգանլը Ուշափին օցաթափ ա անըմ: Համ էլ
քաղաքը ճուր ա ստանըմ: Քառսուն օրըմը քառսուն ճըպատ, քառ-
սուն հաց ա տալիս, քառսուն էլ օց ա վեր ընգնըմ, սատկըմ: Վերչն
էլ Ուշափի օցի կաշին ա տրաքըմ, տոն ա կանխս մին չիմչատ, մին
սև քնքոլլավոր արմաղան տղա:

Դոնյան Գոգանլն ասըմ ա.—Մինչու մհի տոն Ուշափ իր, մհի էտ
անըմը քե սազըմ չի, ինչ անըմով քե կանչեն:

—Օցամանուկ:

Օցամանուկը փրոնըմ ա Դոնյան Գոգանլի ծեռը հու համին
քանդիրով, որով ընդրան քցել ին հորը, տոն են կանխս լիա ախչարք,
մին ոնդ են փրոնըմ, քինըմ: Շատ են քինըմ, թա քիչ, Աստոծ գիդն,
հըսնըմ են մին հավուզի: Շոթերնին հանըմ են հու լըղանըմ:

Տոն մի ասիլ, էս հավուզը Օցամանուկ-Ուշափի թաքավոր հոր
հավուզն ա ինըմ, հենց էտ վախտին էլ պերած են ինըմ թաքա-
վորի ծիանքը ճըրիլի: Նոքանին ինչ անըմ են, անըմ չեն, ծիան-
քը տոնչերը ճըրին չեն կպցընըմ, խլըչկոտըմ են, օրթմիչ են ինըմ:
Վերչը նոքանին կլխի են ընգնըմ, որ ըտրա պաճառը լըղացողների
ջանի շափաղն ա: Արմանք կտրած խնքանը տանըմ են թաքավո-
րին ու թաքուհուն, ըստանք էլ կանխս են տենըմ, որ ուրանց տղեն
ա: Ուրախութուններիցը գիդըմ չեն, թն ինչ անեն: Մին Ուշափ ին
կորցրել, մհի համ մին նախշուն Օցամանուկ ին ճարել, համ էլ մին
Դոնյան Գոգանլ: Էրկուսին էլ պերըմ են պալատ, գուքըմ-գըրթնըմ,
էլ դունաշ ու լալ, էլ ջավահիր ու յաղուլթ կախ տալիս վըրերներիցը,
փրսակըմ:

Քառսուն օր ու քըչեր հըրսանիք են անըմ, սաղ ախչարքը քառ-
սուն օր ու քըչեր ուտըմ ա, խմըմ, լիանըմ հու օրթնըմ ճուխտ ծա-
ղիկներին:

Եփ Դոնյան Գոգանլի բախտավորութունի խնքանը հըսնըմ ա
խորթ մորը, «Վա՛յ,—ասըմ ա,—լոզոն պըպանձվեր, որ իմ հը-
րազաղ ախճկա բախտին քար չըքցի, ընդրա նոբալթը տի խորթ
ախճկան»:

Փոշմանըմ ա, որ ուրն ախճկանը թողել չի տանեն քցեն հորը,
համա դե իլածն իլել էր: Կնիկն սկսըմ ա մարթի միսը քըրքրիլը,

Թե՛ս՝ սննդանոցը տե՛ս իր, ամանան պան գիղը՝ իր, ըստ մհար էլ չե՛ս
ղարուլ իլար, որ քու ախճկանը տանես քցես հորը:

Դե՛ս ողը սև օց ա տանում, մըննում խորթ մոր ջանը, ո՛չ քըչերն
ա թողը՝ քնի, ո՛չ ցիրեկն ա թե՛ս Թանր տալիս: Շատ որ միտկ ա անում,
չատ որ տալիս ա, առնում, վերջը ճարը քթնում ա:

Մին օր էլ տան իլած-չիլածիցը մին բոխճա յա կապը՝ հու
Չանչիյին ասում.—Ա՛յ ախճի, վեր կաց քինանք Դե՛սնյա Գե՛զանին
կըլխալվա՛ն:

Մեր ու ախճիկ վեր են կենում, թե՛ս քինում պալատը:

Էտ վախտը Օցամանուկը ալի քինանցած ա ինում, օթաղը՝
մինակ Դե՛սնյա Գե՛զանին ա ինում, փանջարի առաչին նըստած: Մին
էլ տենում ա, իչ տենա, որ լավ ինի, հեսա ուրա խորթ մերն ու խորթ
քիրը կալիս են կըլխալվա՛ն: Նոքարներին սաս ա տալիս, որ չե՛ս
անեն քինան մոր հու քվոր առաչը, առոք-փառոք պերեն պալա-
տը: Ինքն էլ ուրախութունիցը կլիսը կորցընում ա, էլ գիղը՝ չի, թե՛ս
ինչ սև օր են պերիլու կլիսին մերն ու քիրը: Նոքարներն եփ մորն ու
քվորը պերում են, Դե՛սնյա Գե՛զանը վազ ա տալիս, փըթըթորվում
ա, պաչալը՝ հու ուրախութունիցը լաց ա ինում: Եղո սուփրա յա
պանցում, առաչներին ոսկի ջանքերով ջուռա-ջուռա մանգա յա տինում,
արծաթի փարչերով շարքաթնի յա շարում, հոլմանթ անում:

Մին դոյընջան ուտիլ-խմիլից եղո քիրն ասում ա.—Բա ես ծեր էս
տրախտ բաղերիցը հասարթ եմ մնալու, մհի էլ տար մին քիչ մա՛ն
տու մեղ:

Դե՛սնյա Գե՛զանը պատճառավոր էր, չեմ ու չում ա անում, թե՛ս
ինքը էրկու հոքավոր ա, կարալ չի, թո ուրանք քինան, համա
խորթ քիրը մին դոլից, խորթ մերը մեկէլ դոլից վրա են տալիս, թե՛ս
ուրանք էլ որ օրվա հրազագանին են, որ կարալու չեն քոմանգ անեն:
Դե՛սնյա Գե՛զանին էլ միամիտ հալովը իչ գիղար ընդանց փորացավը,
խաթըրնին կոտրում չի, ուզի յա ինում: Ըստանք աչ ու ծախ դոլիցը
մըննում են դոլթուղը, ուրանց նհետ տանում: Բաղը՝ մին խելաք
ման կալոց եղո, տե՛ս են կալիս չոլը, չոլիցն էլ աս կենում, մըննում
քոլը:

Դե՛սնյա Գե՛զանը լափ հանք տանած ա ինում, խընթրում ա՝ մին
քիչ նըստեն, նափա առնեն: Նըստում են: Դե՛սնյա Գե՛զանը կլիսը
տնում ա մոր ծընգներին հու մուչ-մուչ քընում:

Ջաղու մերը մին ջուռա խոտ ա տինում Դե՛սնյա Գե՛զանի քթին,
որ շատ քնի, եղո կլիսը վեր ա ունում կոքիցը, տինում տափին, հը-
քի չորերը հանում տալիս Չանչիյին հու վեր ունում պերում պալատը,
առոք-փառոք նըստըցնում Օցամանուկի օթաղը՝

Օցամանուկը ավատեղից կանխ ա հու ինչ տեսնա, որ լավ ինի, տենում ա՝ ուրա Դոնյան Գոգանլի տեղը հեսա մին սև կոեչ ա նըստած, պըռոչնին հաստ-հաստ, մազերը թախկած, աչկերը ճըպոտոտ: Հըրցնում ա. «Տիւ ո՞վ ես, որ եկել ես մտել իմ օթաղը, բա իմ Դոնյան Գոգանլը հո՞ւր ա»:

—Քու Դոնյա Գոգանլը ես եմ, որ կամ, հանլն մին օր ա քինանցել ես ավի, ինձ ճընանչում չե՞ս:

—Ձէ՛, իմ Դոնյան Գոգանլի թշերը վանրթի թեր ին, աչկերը՝ հաղողի սև-սև գիլեք, պըռչընին՝ կտրած նուռ, տիւ՝ հո՛ւր, էն՝ հո՛ւր...

—Քո կարոտիցտ հալս խարաբ ա իլել, ըտրա մհար էլ ոանգս քինանցել ա, եկ կոխկիս պրանվի՛, խըտըտի՛, պա՛չ արա, ոանգս կըկան տեղը, եղո էլ որ զուքվեմ-զըրթանրվեմ էլի քու Դոնյան Գոգանլը կինեմ:

—Ես ծիծ ուտող խոխա չեմ, ոչ էլ քոռ, որ իղ խափես, ես իմ վանրթ-մանիշակըս պանց չեմ թողալ, քե մնան ժանգոտածի կշտի պրանվեմ,—ասըմ ա հու տանիցը տիւս կանխա:

Քինում ա դամբըչու կուշտը մին ճուխտ արկաթի տրեխ ա սարքիլ տալիս, հըքնում, մին արկաթի էլ փեղ ա չինիլ տալիս, առնում ծեռը հու Դոնյան Գոգանլ շտեղ ես, տեղըտ իմա՛ց տու, կանխա եմ:

Թո Օցամանուկը քինան ուրա նշանածին ճարիլի, մենք խանքարը տանք Դոնյան Գոգանլիցը: Հեխճը որ զանրթնում ա, տես ա եչըմ, մերը կա ոչ, տեն ա եչըմ, քիրը կա ոչ, չորս ղոլը քոլ-քոլավաթ, մարթ-ինսանի դարալթու էլ ա կա ոչ, ինքն էլ տկոռ, արեն էլ մըննիլի վրա յա:

Մառի լեն-լեն տիրեներիցը շորի մնան մին պան ա չինում, ամոթը ծասկըմ, էղո մին պանակ ոանդ ա փըռնում հու քինում: Քինում ա, քինում, շատ ա քինում, թան քիչ, մին էլ տենում ա սև քերծերի մեչին մին կուճիք սև եղցի, չորս ղոլին էլ ո՛չ տուն, ո՛չ մարթ, չիլ-յաբանի մին տեղ ա:

Ահը սըրտըմը մընում ա եղցին, տենում ա հեսա մեչտեղըմը մին նաչ ա տիրած, վրեն էլ պատանքված մին մեռալ, ըստա կլխի հու ոնների ղոլիցն էլ մին-մին մուս ա վառըմ: Մոտ ա քինում ոննի տակի մուսը տանում ա տինում կլխի կըչտին, կլխի տակինը՝ ոնների կըչտին:

Մին էլ տենում ա՝ մեռալը աչկերը պանցեց հու ըսկսեց խոսալը.—Ով որ ես, իմ գյանքի թիլիսիմը ճարեցիր: Թան տղամարթ ես, ախպերըս ես, թան կնիկարմադ ես՝ քիրըս, թան ախճիկ ես՝ ղըսմանթա:

—Կնիկարմադ եմ,—ասըմ ա Դոնյա Գոգանլը,—քիր կինեմ քե, տիւ վէլ ինձ ախպեր:

Ըսկսում ա կլխին եկածը պատմելը հու խընթրում, որ ուրա ցավին մին դարմանն անի:

Մեռալը, որ մին շիմչատ, նախշուն իրեսով, բեղերը նոր ծըլած ջնհիլ տղա էր, ասում ա.—Քվորըս ասեմ, որ տո՛ւ վես, սըհենց ու սըհենց կըքինաս, ուստ կըկնա մին ամարաթի, էտ մեր տունն ա, ընդեղ մերըս ա քըչեր ու ցիրեկ իմ սուքն ա անում: Մորըս կասես. «Արմաղանի հոքու մհար, Արմաղանի խաթրի մհար ինձ մին տեղ տուր կենամ»: Մերըս, որ անըմըս լսի, համ քեզ ղոնաղ կունթունի, համ էլ հոքսըտ կըքաչի:

Դոնյա Գոգանը Արմաղանի նշանց տված ճընապովը քինում ա, քինում մինչու հըսնում ա մին ամարաթի, չորս ղոլը բաղ-բաղավաթ, ամման մին ծառի տակին մին փահլն ախաղիլիս:

Մոտիկանում ա, ասում.—Արմաղանի հոքու մհար, Արմաղանի խաթրի մհար ինձ մին տե՛ղ տուվեք, ապրեմ:

Փահլեքը որ էս պանը լսում են, վազ են տալիս թաքունուն ասում՝ սըհենց ու սըհենց, ինչ հրամանք ես անում:

—Քինանցեք ասե՛ք էտ ղարիք օղլուչաղին, որ Արմաղանս մեռավ, արես էլ սևացավ, սիրտ չունեմ ամման ասկենողի նհետ նստիլ-վերկենալի: Տարե՛ք բաղվանչու օթաղը, թո ընդեղ մնա, իչքան սիրտը կուզի:

Դոնյա Գոգանը ըտան էլ ա ղայիլ կենում, չոնքի ազաղվիլի վախտը մոտիկ ա ինում: էտ քըչեր ըտեղ չոր խոտի վրա յա քնում, էքսի ոավոտը ցավերը փոռնում են, փահլոցիցը մին-երկու կնիկ կանխ են մինը տատմեր ա տանում, մինը՝ քոմանգչի, մինչու լիս ախաղք ա կանխ ոսկիքաքո՛ւ, մարքարիդ կեռիքներով, լեն ճակատով մին որց տղա:

Դե անդամն ա՝ ծնընդկանին պետմա խավիժ տին, ըտրա մհար էլ փահլեքը վհաքվում են, որը մին պոուր անիլ, որը մին քթան եղ յա մեղր ա պերում, խավիժ են եփում, տաք-տաք տինում ծնընդկանի առաչին:

Հենց էտ սըհաթին Արմաղանը ղուչ տանած կանխ ա Դոնյա Գոգանի պըտըրհանին վեր կանխ հու ասում.—Դոնյա Գոգան, քվորըս հալը ո՞նց ա:

—Ոնց պիտի ինի,—անսանց ասում ա Դոնյա Գոգանը,—տակիս՝ խոտ, վրես՝ խոտ, կերածս էլ՝ հըվաքովի չփոթ:

—Ոչի՛նչ, քի՛րըս, թն Արմաղանի թաքունհի մերը գիղան, որ տո՛ւ ընդրա փըրգարարն ես, տակըտ մախմուռ պանց կըտինի, վրես աթլազ կըքցի, կերածըտ եղ ու մեղր կինի, խոտիտ ըրորոցն էլ՝ սանդակ:

Էս զրոնցը տատմները հու քոմանգչին որ լսըմ են, էրկու ոտն ունին, էրկուսն էլ փոխ են առնըմ, վազ տալի մոր կուշտը, տեղը-տեղին պատմըմ ուրանց լսածն ու տեսածը: Մերը կանխ ա Դոնայն Գոգանին տանըմ ուրան ամարաթը, մեղրահաց ա տալիս ուտիլի, տակին մախմուռ պարց ա տինըմ, ոսկիքանքիլ տղին էլ տինըմ ա ոսկածրած ըրորոցի մեչ:

Տու մի ասիլ, Արմաղանի թիլիսիմը, որ Դոնայն Գոգանը փողըլմիչ էր արել՝ մուսերի տեղը փոխիլով, թամամ չէր իլել, մնըմ էր, որ Արմաղանի մերն էլ ուրան նոբաթին մին անձար մարթի լավութուն աներ, որ թիլիսիմը հեչ տաննար: Դե Դոնայն Գոգանիցը անձար մարթ տրժար թմ ճարվեր, ըտրա մհար էլ հենց որ թաքուհին ընդրան լավութուն արավ, Արմաղանի թիլիսիմն էլ բաթմիչ իլավ, հու Արմաղանը սաղ-սալամաթ թանգան եկավ մոր կուշտը:

Մերը ուրան չիմ փանցըր բոլ-բոլ փող տվավ, իրեք օր, իրեք քըչեր լիքը սուփրոցը կշտին կուշտ ու կուռ կերան, խմեցին Արմաղանի սըղանալի աշկալիւսի կենացը:

Համա Դոնայն Գոգանի դարդը Արմաղանին թմթար չի տալիս:

Վեր ա կենըմ, քինըմ օխտը ճընապոց խաչմերուկըմը մառմառ քարից մին անպոլը ա չինիլ տալիս՝ առաչը հավուզ, ոսկի զինջիլի վրեն, ոսկի մին ջնմ ա կախ տալիս անպորի քարիցը, ջնմի մեչին էլ Դոնայն Գոգանի պատկերքն տանիլ տալիս, հու դարավույնի յա տինըմ անպոլի կոխկին, որ ով կն էտ ջնմով ճուր խմի, եղո ախուվախ անի, յա հուչը քինն, պերեն ուրան կուշտը:

Մին խելաք վնդն յա աս կենըմ, օրը հազար մարթ ա կալիս, էտ ոսկի ջնմովը ճուր ա խմըմ, օրթնըմ անպոլը չինողին, աս կենըմ, համա ոչ մինի սիրտը թուլանըմ չի, հուչը քինըմ չի:

Օրերից մին օր էլ չորերը ճըղոտված, իրեսը մազակալած մին դարիք մարթ, մին նախշուն ախճա նհետ կանխ են հըսնըմ անպոլերին, հավուզըմը իրեսկհատին լրվանըմ, համա տղեն ջնմովը եփ ճուր ա վեր ունըմ քաչըմ կըլիսին, բուրդան ախ ա քաչըմ հու հուչը քինըմ ա, ընգնըմ: Ախճիկը ծընգները թակըմ ա, մազերը պոկըմ, համա շտեղ, տղի հուչը կլիսը չի վհաքվըմ: Ղարավույնին կանխ են տղին չըլակըմ, ախճկանն էլ վեր ունըմ հետերնին, պերըմ Արմաղանի կուշտը:

Եփ որ դարիքը օյանմիչ ա ինըմ, խելքը կանխ ա տեղը, Արմաղանը հըրցնըմ ա.—Ախպե՛ր, թմ սըռ չի, ասա՛, տենամ՝ ճուր խմիլիս հուչըտ խի՞ քինաց:

Ղարիքն էլ ասըմ ա.—Ասսանա թաքուն չի, քեզանա ինչ թաքուն պահեմ սըհենց ու սըհենց...

Ես մին թաքավորի մինըձար տղեն ի, համա Ասսու պատիժքովը

մորից իլա օցի կերպով, ածղահի իշտանհով: Տանել ի ժողովուրթի աչկի կիրոզը, օրը մին ախճիկ ի կուլ տալիս մինչու սաղ քաղաքի ախճիկների քոքը կըտրեցի: Վերչըմը մին ախճիկ էր մնացել, ընդան էլ պերան: Հենց ուզըմ ի կուլ տամ, մին օյին հանեց կըլխիս, մին օյին, որ ասիլ չինիլ: Համա հենց էտ օյինն էլ սանքաբ տանամ, որ իմ կլխին թափված Ասսու անիսկը հեչ ինի, ես էլհամ տանոնամ մարթ, համա անըմըս մնաց Օցամանուկ:

էտ ախճիկը, որ մին Դոննյա Գոգանլ էր, տանամ իմ կնիկը: Համա մին օր ավատեղից ետ տանոն տուն, տեսա կա ոչ: Օթաղըմըս մին այբեջուռա, մին սև ակոեմ ախճիկ էր նըստած, ուրանից բեթնար մին կնիկ էլ կոխկին:

Թա ինչ էր իլել Դոննյա Գոգանլիս նհետ, հուր էր քինացել, կարացի ոչ գիղամ: Մին սև որթ սիրտըս կըռծըմ էր, մինն ինձ ասըմ էր, թա էտ էրկու ջաղունին կլոխը խաչել են: Սըհենց էրկու մտկի մեչ տանիցը տուս եկա, արկաթի տըրեխնի հըքա, արկաթի էլ մին ծեռնափեթ վե կալա հու ըսկսեցի ախշարքից ախշարք ման կանլը: Երկաթի տըրեխնիս ճըղվեցին, երկաթի փեղըս մաշվեց, մին օր սոված, մին օր կուշտ եկա հըսա մին ղանչանգ անպոռի, համա ոչ մին տեղ Դոննյա Գոգանլիս ոնողը կարացի ոչ ճարեմ, յա մին խանքար գիղամ: էտ անպոռիցը եփ ուղեցիմ ճուր խմեմ, բոլորան ոսկի ջնմի տակին Դոննյա Գոգանլիս չիքիլը տեսամ, էդո թա ինչ ա իլել իղ նհետ, գիղըմ չեմ: Աստոծ կըսիրես, թա մին պան ես գիղըմ, ասա՛, չտեղ ա Դոննյա Գոգանլս, յա ինչ խանքար կա ընդանա:

Արմաղանն էլ իշ որ գիղըմ էր, ըսկըմ ա մին-մին պատմիլը, վերչն էլ թա մտկովըս հեչ աս չէր կենա, որ տու Դոննյա Գոգանլիս մտահան արած չիր ինի:

Մհի գիղըմ չեմ՝ իմ գիղացած ախճիկը քու Դոննյա Գոգանլն ա, թա չէ, համա իսկական Գոգանլ ա, որ կա: Իմ աչկն էլ ա ընդրա վրն, ուզըմ ի նհետը փսակվի, համա որ եկել ես, մեր դաղավորը ինքը կինի:

Թո մին փարչ չարբանթ տան ուրան, որիս թնվանգան կանի, ընդրա ղըսմանթը կըտանոնա:

Դոննյա Գոգանլին կանչըմ են, ծեռը տալիս չարբանթով լիքը մին արծաթ փարչ, թա էս էրկու ջահիլներիցը, որին տվար փարչը, ընդրա ղըսմանթը կինես:

Դոննյա Գոգանլը փարչը սուսուփուս տինըմ ա Օցամանուկի առաջին, ինքն էլ կոխկին նըստըմ, թա.—Արմաղան, տու իմ ախպերն ես, ախպեր էլ կըմնաս: Աման մի կնգա մին մարթ ա ինըմ: Օցամանուկը հա՛մ իմ մարթն ա, հա՛մ էլ ոսկիքաքոյ տղիս հերը:

Օցամանուկն էլ ասքմ ա.—Արմաղան, ախպեր՝ Ջան, տո՛ւ իմ հարսնացուվին ես փրգել, տանել ընդրա ախպերը, սոր էլ հրսցրել ես ինձ: Ես էլ էս ախճկանն եմ փրգել ղաչաղների ծեռիցը, տանել ընդրա մհար հալալ ախպորից էլ լնվ, մհի հնալթ պետմա քե ղըսմնթ ինի: Քեզանա հալալ կաթնակեր, հավաղարիմ հընգեր Ծաղիկիս մհար տըժար թն ճարեմ:

Ախպորս ասեմ, եփ Դոննյա Գոզնլիս ի ման կնլիս, մին անքամ քչերը չոլըմը ոնաստ եկավ ինձ, չորս ղոլըմը ո՛չ կեղ կար, ո՛չ տուն, ո՛չ էլ մարթի ղոլթո՛ւ: Ծոթոլը ահը սըրտըմըս քինըմ ի, մին էլ տեսա մին քանի քնհն, մտա ըտանցից մինը հու քնեցի, մինչու լուսը կըպնցվե, որ ճընապա ընգնի:

Քըչերվա կեսին ղըչըրըչի սնսիցը գնրթնեցի: Տո՛ւ մի ասիլ, ինքս իմ ոտովը ընգել ի ղաչաղների պո՛ւնը: Ըստանք քըչերը մին հառուստ քնրվան են կըտրած ինըմ, ավը պերած, որ ըտեղ պըժանեն:

Վեր կացամ, քնհի պուճախըմը կուչ եկամ, տենամ՝ վերչն ինչ ա ինիլու:

Էս մոր ծիծ կըտրող ավազակներիցը իրեք հոքի մին խուրջին պերան, մին էլ ոտ ու ծեռ կապած մի ախճիկ, թողացին քնհըմը թն՝ էս ղաչաղբաշու պաժինն ա, թո մնա ըստեղ մինչու ուրմ կնլը, մենք էլ քինանք մեր պանին: Ըստանց քիննլիցը եղը յավաչ մոտկացա ախճկանը կապերը քանդեցի, ասեցի, որ վախի ոչ, Աստոծ մեծ ա, թն փըրգվեցինք, մին տեղ ենք փըրգվիլու, թն մեռանք, մին տեղ ենք մեռնիլու:

Քիչ եղը մինը մտավ քնհեն: Տո՛ւ մի ասիլ, ղաչաղբաշին ա, հենց էն ա ուզըմ էր Ծաղիկին անպատվի, արկաթի փեղըս որ վրն պերա, ընգնիլն ու հոքին տալը մին իլավ:

Ըստա խուրջինը, թվանգն ու ղնմեն վե կալանք, Ծաղիկի նհետ քնհիցը տո՛ւս եկանք: Էնքան մթին քչեր էր, որ մատտ աչկըտ կոխիլ իրեալ չէր, չիմ ղաչաղին էլ արխային քնած ին: Անփորը, անվնաս ըտանց ճանգիցը պըժանք հու էն օրվանից Ծաղիկը իմ քիրն ա, ես՝ ուրմ ախպերը: Մհի տո՛ւ էսքան լնվոթո՛ւնը որ ինձ ու քու քվոր մհար ես արել, ես էլ քեզ ու իմ քվոր մհար եմ անըմ:

Մին պնրցի ծերանա՛ք: Ուրո՛ւր հավաղարի՛մ ինեք:

Թաքուհի մերը չատ ա ուրխանըմ, որ մինըճար տղեն հա՛մ Ծաղիկ ա ճարել, հա՛մ էլ թնգն քիր ու ախպեր: Օխտը օր, օխտը քըչեր հըրսանիք ա անըմ, Արմաղանին ու Ծաղիկին փըսակըմ, Օցամանուկին ու Դոննյա Գոզնլին էլ առոք-փառոք ճընապա յա տինըմ ղըբն ուրանց երգիրը:

Թո Արմաղանն ու Ծաղիկը ուրանց մեղրամիսն աս կըցնեն, մենք խնրանրը տանք Օցամանուկիցը հու Դոննյա Գոզնլիցը:

Ըստանք սեյր անիլով քինըմ են, քինըմ, վերչը հըսնըմ են տեղ:

Թաքավորն ու թաքուհին, սըքի չորերը հըքած, լաց ու չիվանից հալումաչ իլած, որ բողբոջան տենըմ չեն ուրանց տղին ու հարսին սաղ-սալամաթ, ախշարքովը մին են ինըմ, սև չորերը չպըրտըմ են մին ղոլ ու զուռնա-ղավալով ունթունըմ ուրանց կորած հըրազաղ-ներին:

Կալիս են Օցամանուկի օթաղը: Չաչոն մոր նհետ հալամ ընդեղ ա ինըմ:

Օցամանուկն ասըմ ա.—Ինչ արել ես, արել, բախչըմ եմ քե, քանի որ Դոնյա Գոգանլս սաղ-սալամաթ ճարվել ա: Մհի ասա՛ քառսուն խանչալ ես ուզըմ, թա քառսուն ճորի:

—Քառսուն խանչալը թո խըրվի դոլչմանիս սիրտը, ինձ քառսուն ճորի՛ տուր, որ մին-մին նինեմ, քինամ ախշարքը պտըտեմ, սեյր անեմ:

—Թո քու ուզածն ինի,—ասըմ ա Օցամանուկը,—քառսուն դանջըղ ճորի ա պերիլ տալիս, սուտ հարսին ու գանքանչին կապիլ ա տալիս հաքոններիցը, պաց թողըմ: Ճորիքը ըտանց սար ու քոլով են տալիս լեչերին հարիլ կուտուր անըմ:

Եղո թագազան հա՛մ հըրսանիք են անըմ, հա՛մ կնունք, քառսուն օր ու քառսուն քըչեր ուտըմ են, խմըմ, քեփ անըմ:

Ընդանք հըսան ուրանց մուրազին, տոլք էլ հըսանք ծեր մուրազին:

Երգընքեն էրկու խնձոր ընգնի, մինը՝ նաղըլ ասողին, մինը՝ լըսողներին, թա քչեփը մնա, էն էլ՝ անգաճ չըտընողներին:

